ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11)514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-4386 «01» 03 2021թ.

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ն. ԱՎԵՏՅԱՆԻՆ
ք. Երևան, Աջափնյակ 0097, Նորաշեն թաղ. Շ/27/72 բն.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Մասնակից/ միջև 30.12.2020 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով գնման պայմանագիր, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով: Համաձայն պայմանագրի 8.15 կետի՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»

Հաշվի առնելով, որ Մասնակցին պատշաճ ձևով ներկայացվել է համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից

սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կատարող՝ Է. Կիրակոսյան

011 514-129